# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Վարչութիւնը 1911 — 1912 ուսումնական տարուայ համար նոր աշակերտների ընդունելութեան մասին յայտարարում է հետևեալը։

Ե-րդ և Զ-րդ դասարաններում տեղ չկայ. Դ-րդ դասարանում կընդունուին 8 հոգի, Գ-րդում 30 հոգի։ Գ-րդ դասարան ընդունուողների տարիքը 14-ից անց չպէտք է լինի։

Խնդրատուները պէտք է ներկայացնեն ծննդեան, ծաղկի և ուսման վկայականները մինչև օգոստոսի 25-ը, որ օրից սկսուելու են քննութիւնները։

Թէ նոր և թէ հին աշակերտներն անպատճառ պէտք է ներկայացնեն սահմանուած գրաւականը՝ համաձայն Ճեմարանի Կանոնադրութեան 84-րդ յօդուածի. «Նորեկ աշակերտք և ուսանողք պարտին դնել ի գրաւ զգումար «ինչ, այն է յայսկոյս Կովկասեանք 50 րուբլիս. իսկ «եկեալք յայլ վիճակաց Ռուսաստանի կամ յօտար աշ«խարհաց 75 րուբլիս, որպէս զի հատուսցի այն ի ծախս «ճանապարհի, եթէ հարկ լիցի արձակել զաշակերտն կամ «զուսանողն զայն, ևս և ի գին կորուսեալ կամ վատնեալ «գրոց, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց»։

Տեսուչ Ճեմարանի Բագրատ վարդապետ.